

Երուսաղեմի տաճարին յատուկ էր: Հետեւաբար ասոնց նուիրականութիւնը ցուցընելու համար՝ թարգմանիչք զանոնք փոխեր են սկոյ, որ Ե դարուն արդէն Պատարագի սպաս եղած էր, բայց ձեւով նոյն էր «բաժակին» հետ, — ինչպէս վերջնոյս հոմանիշ արեւմտեան calixն ու մեր ըսկիւնը նոյն էին սրբազան նշանակութեամբ, — որոյ համար սկիհը բաժակ ալ կոչուած է շատ անգամ (Փաւս. 225. Ոսկ. Մտթ. Ա, 657. Թղթ. Ա, 703): Չեւոց միութեան ուրիշ նշան մ'է սկւոյն յիշատակութիւնը Ե դարու խնճոյից մէջ. որոյ համար Ս. Սահակայ կանոնք կը յանդիմանէին այն քահանայքը՝ որ եկեղեցւոյ «զսկիւն ի գինըմպելիս յանօթս (փոխ) տան զինուորաց» (93): Այս փոխատուութիւնը դժուարաւ կրնար պատահիլ՝ եթէ անօթս ընտանի չըլինէր նաեւ կերակրոյ սեղանին: Բաժակը կամ սկիհը բախտաւոր դիպուածով մը կ'երեւի դեռ Աղթամարայ եկեղեցւոյն քանդակաց մէջ՝ ժ դարէն, յորում Գագիկ արքայ նստած է գինարբութեան, ի ձեռին բռնած յիշեալ անօթը, լայն ու խոր ընդունարանով, նեղ բունով, ու պատուանդանով, ըստ հրատարակութեան նոյն քանդակին (Ազգ. Հնդ. Ի, 197):

Պատժանակ: Այս ալ յիշուած է երկու